

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Մայիս*

*2022թ.*

Յ Գորիս Ջ

31.05.2022

**Պրոֆեսոր Լեոնիկ Պետրոսյանը և Գորիսի համալսարանը կես տարի ղեկավարած Թեհմինա Մարությանը ռեկտորի ընտրությունից առաջ ինքնաբացարկ ներկայացրին. ինչու՞**

Մայիսի 30-ին Գորիսի պետական համալսարանում ռեկտորի ընտրություն էր...

Համալսարանի ռեկտոր ընտրվեց Տիգրան Վանդունցը, ով տեխնիկական գիտությունների թեկնածու է, դոցենտ և ժամանակին դասախոսում էր Գորիսի պետական համալսարանում, իսկ վերջին շրջանում (տնօրենի պաշտոնակատարի կարգավիճակով) գլխավորում էր Ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղը:

Քվեարկությունից առաջ, սակայն, տեղի ունեցան զարգացումներ, որոնք, անշուշտ, ուշադրության արժանի են: Խոսքը ռեկտորի պաշտոնին հավակնող Թեհմինա Մարությանի և Լեոնիկ Պետրոսյանի առեղծվածային ինքնաբացարկի մասին է: Ընդ որում՝ նրանցից և ոչ մեկը դեռևս չի պարզաբանել, թե ինչով էր պայմանավորված նման քայլը:

Թեհմինա Մարությանը գրականագիտության ոլորտում ճանաչված դեմք է մեր օրերում և մոտ կես տարի գլխավորել է Գորիսի պետական համալսարանը:

Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեոնիկ Պետրոսյանը կրթության ոլորտի (այդ թվում՝ բուհական) փորձառու և ճանաչված մասնագետ է, մի քանի դասագրքի և ուսումնամեթոդական աշխատանքի հեղինակ:

Եվ դժվար է պատկերացնել, որ նրանք Գորիսի պետական համալսարանի ռեկտորի թեկնածու են առաջադրվել միայն առաջադրվելու համար:

Ու ողջամիտ հարց է առաջացել՝ ի՞նչ է տեղի ունեցել քվեարկությունից ժամեր առաջ, որ Թեհմինա Մարությանն ու Լեոնիկ Պետրոսյանը հրաժարվել են իրենց որոշումից:

Հրաժարականից հետո մրցույթը տեղի է ունեցել Տիգրան Վանդունցի և ԳՊՀ ամբիոնի վարիչ Հրայր Պետրոսյանի միջև:

Գորիսի պետական համալսարանի կառավարման խորհրդում, սակայն, ռեկտորի ընտրության հարցը չէր միայն օրակարգում:

Կառավարման խորհուրդն այսուհետ կգլխավորի Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ով օրեր առաջ էր ընդգրկվել խորհրդի կազմում: Մինչ այդ խորհուրդը ղեկավարում էր ԳՊՀ նախկին ռեկտոր Արտուշ Ղուկասյանը, ով այդ պարտականությունը ստանձնել էր ռեկտորի պաշտոնը 2021-ի դեկտեմբերի 20-ին թողնելուց հետո (լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ):

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/profesor-lernik-petrosyany-ev-gorisi-hamalsarany-kes-tarikhe-kavarats-tehmina-marutyany-rektori-yntrutyunits-araj-inqabatsark-nerkayatsrin-inchu>

27.05.2022

**Կապանում Իրանի հյուպատոսությունը տարբեր ոլորտներում նոր համագործակցությունների հնարավորություն կստեղծի. Դեսպան**

Հայաստանի Սյունիքի մարզի Կապան քաղաքում Իրանի հյուպատոսություն ունենալու մասին իրանական և հայկական կողմերի միջև պետական մակարդակով համաձայնություն կա: «Արմենպրես»-ի հարցին ի պատասխան այս մասին ասաց Հայաստանում Իրանի դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին: «Աշխատանքները սկսվել են, բայց դեռ

համապատասխան տարածքը ձեռք չենք բերել: Դա ապացուցում է այս մարզի կարևորությունը Իրանի և Հայաստանի համար», հավելեց նա:

Զոհուրիի խոսքով՝ դա շատ լավ հնարավորություն կստեղծի Հայաստանի սահմանակից մարզերի և Իրանի սահմանակից նահանգների՝ Թավրիզի, Արևմտյան Ատրպատականի հետ համագործակցության առումով, առևտրաշրջանառությունը կարող է նոր թափ և նոր իմաստ ստանալ:

«Տարբեր ուղղություններով համագործակցություններ ենք նախատեսում սահմանակից նահանգների և մարզերի միջև՝ գիտական, համալսարանական, տնտեսական և այլ ոլորտներում, նաև զբոսաշրջության ոլորտում շատ լավ նախագծեր ենք մշակում, որը մոտ ապագայում Սյունիքում տեղի կունենա, և դա կարող է օգնել երկու երկրների ժողովուրդներին միմյանց հետ ավելի լավ ծանոթանալու գործում», -ասաց նա:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1084388/>

**26.05.2022**

### **Հայ ժողովրդական երգարվեստի եւ պարարվեստի փառատոն՝ Սյունիք – 2022**

Մայիսի 25-ին մարզկենտրոն Կապանում կայացավ «Սյունիք - 2022» հայ ժողովրդական երգարվեստի եւ պարարվեստի փառատոնը (նախաձեռնող՝ Սյունիքի մարզպետարան, աշխատանքների կազմակերպումը՝ մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի):

Միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել ստեղծագործական խմբեր, երաժշտական համույթներ ու անհատ կատարողներ Կապանի, Մեղրու, Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջաններից:

Մինչ երեկոյան դահլիճային կատարումները՝ փառատոնի մասնակից պարային խմբերը Կապանի Գարեգին Նժդեհի հուշահամալիրում միասին «Սյունյաց քոչարի» պարեցին:

Փառատոնի նպատակն էր պահպանել ու խրախուսել հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի տարածումը, հայտնաբերել այդ ոլորտում մարզի շնորհալիներին, նրանց համար ստեղծել միասնական հարթակ՝ միմյանց ճանաչելու, փորձի փոխանակման, համատեղ նախաձեռնություններով հանդես գալու համար:

Նպատակ կա նաեւ այն զարգացնել ու դարձնել ամենամյա:

Աղբյուրը՝ [http://syunik.mtad.am/news/item/2022/05/26/paraton\\_marzajin\\_joxarvest/](http://syunik.mtad.am/news/item/2022/05/26/paraton_marzajin_joxarvest/)

**25.05.2022**

### **ՀՀ-ՈՒՄ ՌԴ ԴԵՍՊԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՂԻՐԿԻՆԻ ԱՅՅԸ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոլիբրկինը Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակներում մայիսի 25-ին հյուրընկալվել է Մեղրի համայնքում:

Դեսպանը հանդիպում է ունեցել Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանի, ՌԴ սահմանապահ զորամասի հրամանատար, գնդապետ Ա. Բուրշտինի և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Մինյակովի հետ:

Հանդիպման ընթացքում Բագրատ Զաքարյանը դեսպանին ծանոթացրել է համայնքում առկա խնդիրներին, ինչպես նաև ներկայացրել համայնքի զարգացման հնարավորություններն ու ուղիները:

Մերզեյ Կոպիլիկինը նշել է, որ Մեդրին յուրահատուկ դիմագիծ ունի և այստեղ ինքը զբոսաշրջության ոլորտում հետագա համագործակցության նախադրյալներ է տեսնում:

Դեսպանն ու համայնքի ղեկավարն անդրադարձել են նաև այն կրթական, մշակութային ծրագրերին, որ իրականացնում է դեսպանատունը համայնքում: Բազրատ Ջաքարյանը շնորհակալություն է հայտնել դեսպան Մերզեյ Կոպիլիկինին Մեդրի համայնք այցելելու և հայ-ռուսական բարեկամության համատեքստում մեր երկրին աջակցելու համար:

Բազրատ Ջաքարյանն անդրադարձել է նաև անվտանգային առումով Մեդրի համայնքում ռուս սահմանապահների ներկայության կարևորության հարցին՝ շնորհակալություն հայտնելով սերտ համագործակցության ու տարբեր հարցերում նրանց կողմից ցուցաբերված աջակցության համար:

Ներկաները քննարկել են նաև առավել ակտիվ համագործակցությանը, զբոսաշրջության զարգացմանը, ենթակառուցվածքներին վերաբերող այլ հարցեր:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/meghri.municipality/posts/391694953002198>

**25.05.2022**

### **Սյունիքում անվտանգության ապահովման հարցում ամենակարևորը ռուս սահմանապահների դերակատարումն է, մարզպետն ասել է ՌԴ դեսպանին**

Մայիսի 25-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը հանդիպել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Մերզեյ Կոպիլիկինին, [NEWS.am](https://www.news.am)–ին տեղեկացնում են Սյունիքի մարզպետարանից:

Հանդիպմանը մասնակցել են նաև Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը, ռուսական սահմանապահ ծառայության հրամանատարության, ՀՀ-ում ՌԴ առևտրային ներկայացուցչության անդամներ:

Մարզպետը շնորհակալություն է հայտնել դեսպանին մարզ այցելելու համար, նաև շեշտել հայ-ռուսական բարեկամության ու բոլոր ոլորտներում համագործակցության կարևորությունը մարզի համար: Ռոբերտ Ղուկասյանը նշել է նաև Սյունիքի խոշոր ձեռնարկություններում ռուսական կապիտալի ներկայության մասին, բայց հավելել, որ մարզի կյանքում ամենակարևորը ռուս սահմանապահների դերակատարումն է բնակչության անվտանգության ապահովման հարցում:

Դեսպանը շնորհակալություն է հայտնել Սյունիքի մարզային ու համայնքային իշխանություններին՝ ռուս սահմանապահների հետ սերտ համագործակցության ու տարբեր հարցերում աջակցության համար:

Մերզեյ Կոպիլիկինն ասել է, որ հայ եւ ռուս ժողովուրդները կապված են պատմությամբ, մշակույթով, ավանդույթներով, եւ այդ կապերն ավելի ու ավելի ամրապնդել է պետք. «Ինչ վերաբերում է Սյունիքին, մարդիկ այստեղ միայն լսելով չէ, որ գիտեն այդ կապերի մասին, նրանք ամեն օր տեսնում են դա»:

Բարձրաստիճան դիվանագետը ներկայացրել է նաև այն կրթական, մշակութային, երիտասարդական ծրագրերը, որ մարզում իրականացնում է դեսպանատունը:

Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը եւս շնորհակալություն է հայտնել դեսպանին համագործակցության համար ու նշել անվտանգային առումով ռուս սահմանապահների ներկայության կարևորությունը համայնքի համար:

Ներկաները քննարկել են տնտեսական, ներդրումային առավել ակտիվ համագործակցությանը, երկկողմ ուղղությամբ զբոսաշրջության զարգացմանը, ենթակառուցվածքներին վերաբերող եւ այլ հարցեր:

Հանդիպման ընթացքում ՌԴ առևտրային ներկայացուցիչ Աննա Դոնչենկոն, առևտրատնտեսական հարաբերությունների մասին խոսելիս, հայտնել է, որ ռուսական կապիտալով ներդրումների ծավալով ՀՀ-ում Սյունիքը Երեւանից հետո երկրորդն է ու նշել տնտեսական կապերի ակտիվացման հեռանկարների մասին: Նա նաեւ ասել է, որ ռուսական կողմը պատրաստակամ է զարգացնել երկրների միջեւ միջմարզային համագործակցությունը:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/703920.html>

**25.05.2022**

### **Արևմուտքի դեսպանների սյունիքյան սեթևեթանքների ուշացած և կասկածելի շքերթը**

Արցախյան երրորդ պատերազմի ողբերգական օրերին ջուրը բերանն առած արևմտյան դեսպանները շարունակում են հնաշունչ այցելություններ կատարել Սյունիք ու մեր ցավերին կարեկից լինելու պատրանք ստեղծել...

Օրումեջ Սյունիք այցելող Լին Թրեյսին՝ ՀՀ -ում ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպանը, մայիսի 24-ին նորից մարզկենտրոնում էր:

Նույն օրը Գորիսում էր ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը՝ Եվրոպայի օրվան նվիրված միջոցառումների առիթով:

Առաջին հայացքից դրանք ողջունելի այցելություններ էին, սակայն...

Բազմաթիվ սյունեցիներ Արևմուտքի դեսպանների այդ կարգի այցելությունները վիրավորական են համարում...

2020-ի աշնանային օրերին, երբ թուրք-ադրբեջանական-տեռորիստական հորդաները հարձակվել էին Հայոց աշխարհի վրա, երբ հայ խաղաղ բնակչության դեմ նույնիսկ արգելված զենք ու զինատեսակներ էին կիրառվում, նրանցից և ոչ մեկը ձայն-ծպտուն չէր հանում:

Իսկ հիմա... Սյունիք այցելելով չեն էլ ուզում բառ անգամ արտաբերել մեր երկրամասից՝ ազերիների կողմից հետպատերազմյան շրջանում բռնազավթված տարածքների մասին, չեն էլ ուզում խոսք ասել պատերազմում անհետ կորած ու գերեվարված մեր հայրենակիցների մասին, որոնց թվում նաև 13 սյունեցիներ կան:

Այդ բոլորով հանդերձ՝ կարելի էր այս անգամ նույնպես, ինչպես նախորդ նման այցերի դեպքում, լուռ հայեցողի կեցվածք ընդունել, բայց ...

ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի Սյունիք կատարած այցի վերաբերյալ մարզպետարանի հաղորդագրության մեջ մասնավորապես նշվում է՝ «Դեսպանը կարևորել է հատկապես Սյունիքում զբոսաշրջության զարգացումը՝ նշելով, որ այս առումով մարզը մեծ ներուժ ունի, ու դա պետք է ներկայացնել մարդկանց»:

Անկեղծ լինենք՝ Սյունիքին առնչվող այսպիսի նախադասություն կարող էին մոզոնել միայն այլմուլորակայինները կամ երկրամասի հետ որևէ աղերս չունեցողները:

Եվ ստիպված ենք տիկին դեսպանին հարց ուղղել. անշուշտ, Սյունիքը զբոսաշրջային մեծ ներուժ ունի, բայց չէ՞ որ 2020 թ. նոյեմբերի 9-ից և հատկապես դեկտեմբերի 18-ից հետո Սյունիքն այլևս կորցրել է այդ հմայքն ու ներուժը:

Պատասխանեք, խնդրեմ՝ ինչպե՞ս այցելենք, օրինակ, Սև լիճ, որը մեր լեռնաշխարհի ամենագեղատեսիլ վայրն է: Մոսիների պուրակի ո՞ր մասը կարող ենք վայելել 2022 թ. մարտյան հայտնի անեքսիայից հետո: Ո՞ր ճանապարհով գնանք Բղենո Նորավանք, որտեղ գտնվում են պատկերաքանդակային արվեստի բացառիկ նմուշներ պատմական հայոց աշխարհի մասշտաբով: Արդյո՞ք հնարավոր է այցելել Ուխտասարի ժայռապատկերների բաց թանգարան, որը եզակի հուշարձան է աշխարհի մասշտաբով: Կարո՞ղ եք երաշխավորել մեր անվտանգությունը, եթե կամենանք այցելել սահմանամերձ քրիստոնեական սրբավայրեր... Իհարկե, չեք կարող, թե չէ Իլհամը կնեղանա և Ձեր հարավկովկասյան առաքելությունն անիմաստ կդառնա:

Եվ ուրեմն՝ եթե այդ վայրեր այցելելն այլևս հնարավոր չէ կամ ռիսկային է, ապա ի՞նչ զբոսաշրջության մասին է խոսքը, ինչպե՞ս հավատանք Ձեր խոսքերի լրջությանն ու անկեղծությանը:

Հարցերի տեղիք է տվել նաև ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինի գործիսյան ճեպագրույցը: Հարգելի դեսպանն այդպես էլ չի պատասխանել «Սյունյաց երկրի» հարցին, թե ինչպե՞ս է պատահում, որ տարիներ շարունակ ԵՄ-ի դրամաշնորհային մրցույթներում Սյունիքից նույն սուբյեկտներն են «հաղթում»: Ինչպե՞ս է ստացվել, որ ԵՄ-ի սյունիքյան աջակցության ծրագրերի շահառուները գրեթե նույն սուբյեկտներն են: Արդյո՞ք դա Սյունիքում սեփական «հինգերորդ շարասյուն» ձևավորելու ակնհայտ նպատակ չի հետապնդում:

Ոչ պակաս տարօրինակ էր դրվագը, երբ տիկին դեսպանը խորհուրդ տվեց մեզ՝ այդ հարցերով համագործակցել Սյունիքի մարզային լրատվամիջոցների հետ՝ չնշելով նույնիսկ, թե այդ որոնք են «Սյունիքի մարզային լրատվամիջոցներ» ասվածը. շատ կուզենայինք գոնե մեկի անունը լսել:

ԵՄ դեսպանը բառ անգամ չասաց ԵՆ նախագահ Շառլ Միշելի մայիսի 22-ի հակաարցախյան և հակահայկական հայտնի հայտարարության վերաբերյալ, երբ ամենաբարձր եվրոչինովնիկը թքել էր մեր պատմության ու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա ու «Արցախի Հանրապետություն» լեզվի արտահայտության փոխարեն գործածել «Ղարաբաղի էթնիկ հայ բնակչություն» թուրքահնար բառակապակցությունը:

Ահա, թե ինչպիսի «բարեկամներ» էին մեզ այցի եկել...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/arevmutqi-despanneri-syuniqyan-setevetanqneri-ushatsats-ev-kaskatseli-shqerty>

**22.05.2022**

**Արմեն Հակոբջանյանը Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի հետ «Թանգարանային գիշեր» միջոցառման շրջանակներում այցելել են Միսիանի Նիկողայոս Ադոնցի անվան պատմության թանգարան**

Մույն թվականի մայիսի 21-ին Միսիանի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի հետ "Թանգարանային գիշեր" միջոցառման շրջանակներում այցելել է Միսիանի Նիկողայոս Ադոնցի անվան պատմության թանգարան, որտեղ ներկայացված է Սյունիքի հարուստ մշակութային ժառանգությունը:

Այնուհետև նրանք Հայաստանի ազգային պատկերասրահի "Միսիանի պատկերասրահ" մասնաճյուղում ներկա գտնվեցին "Թանգարանների ուժը" խորագրով միջոցառմանը, որի ընթացքում վայելեցին "Համո Սահյանի անվան Միսիանի քաղաքային մշակույթի կենտրոն" ՀՈԱԿ -ի ժողովրդական գործիքների անսամբլի (գեղ. ղեկավար՝ Հարություն Գրիգորյան) կատարումները:

Աղբյուրը՝

[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=149015114316541&id=104490652102321](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=149015114316541&id=104490652102321)

**21.05.2022**

### **Ճեպագրույց լրատվամիջոցների հետ՝ Գորիսում**

Եվրոպական միություն-Հայաստան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին, ՀՀԳՀ համաձայնագրին և 2022թ. Եվրոպայի օրվան նվիրված մամուլի ճեպագրույցը տեղի կունենա սույն թվականի մայիսի 24-ին, ժամը 14:30-ին «Միրհավ» հյուրանոցում (ք. Գորիս, Մաշտոց 100, 2-րդ շենքի առաջին հարկ):

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը Սյունիքի մարզում հանդես կգա տեղի լրատվամիջոցների համար կարճ հայտարարությամբ և կպատասխանի վերը նշված թեմաներին առնչվող հարցերին: Ճեպագրույցին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև սույն թվականի մայիսի 23-ը, ժամը 15:00՝ [nare.harutyunyan@publicis.am](mailto:nare.harutyunyan@publicis.am) էլ. հասցեին ուղարկելով լրագրողի, օպերատորի, լուսանկարչի անունը և լրատվամիջոցի անվանումը: Լրատվամիջոցների գրանցումը կսկսվի մայիսի 24-ին, ժամը 14:00-ին:

Եվրոպական միություն-Հայաստան դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Սյունիքի մարզում կանցկացվեն մի շարք միջոցառումներ:

Եվրոպական միության և Հայաստանի միջև հարաբերությունները կարգավորվում են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, որը ստորագրվել է 2017թ. նոյեմբերի 24-ին և ուժի մեջ մտել 2021թ. մարտի 1-ին: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը նոր ամուր հիմք է ստեղծում՝ ընդլայնելու բարեփոխումների օրակարգը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ուղղությամբ: Եվրոպական միությունը և Հայաստանը հանձնառու են աշխատել միասին՝ ի բարօրություն քաղաքացիների, և նպաստել ժողովրդավարության ամրապնդմանը, քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ կայունությանը: Կողմերը նաև հանձնառու են տարածաշրջանային և միջազգային մակարդակներում խթանել, պահպանել և ամրապնդել խաղաղությունը և կայունությունը, ընդլայնել համագործակցությունը ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում՝ նպատակ ունենալով ամրապնդել իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը:

1950թ. մայիսի 9-ին Ռոբերտ Շումանը ներկայացրել է կազմակերպված Եվրոպա կառուցելու իր տեսլականը, որն անհրաժեշտ էր զարգացում և խաղաղ

փոխհարաբերություններ հաստատելու համար: Այսօր մայիսի 9-ը դարձել է Եվրոպայի խորհրդանիշը՝ Եվրոպայի օրը, որը դրոշի, օրհներգի, նշանաբանի և միասնական արժույթի (եվրո) հետ միասին, արտահայտում է Եվրոպական միության քաղաքական ինքնությունը: Եվրոպայի օրվա առթիվ կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ և տոնակատարություններ, որոնք Եվրոպան մոտ են դարձնում ինչպես նրա, այնպես էլ հարևան պետությունների քաղաքացիների համար:

***Հրատվամիջոցների հարցումների համար դիմել Անահիտ Ազատյանին՝ +374 91202387:***

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/chepazruyts-lratvamijotsneri-het-gorisum-1>

**18.05.2022**

**Հանդիպում միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ՝ ընթացիկ ու առաջիկա ծրագրերի քննարկման նպատակով**

Մայիսի 17-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն ընդունել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալ Կոնստանտին Սոկուլսկիին, Եվրոպական ներդրումային բանկի Հայաստանի պետական հատվածի վարկավորման գործառնությունների պատասխանատու Ստեֆանի Գիար-Բրանին, ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության անդամների ու վերոնշյալ կառույցների այլ ներկայացուցիչների:

Միջազգային կազմակերպությունների պաշտոնյաները նշել են Սյունիքի հանդեպ աճող հետաքրքրության ու իրենց առաջիկա ծրագրերում մարզը որպես գերակայություն սահմանելու մասին ու, ըստ այդմ, հանդիպման նպատակն էր տեղում փաստերի ու տեղեկատվության հավաքումը՝ ԵՆԲ շրջանակային վարկի նախապատրաստման համար՝ ի աջակցություն Սյունիքի դիմակայության, Սյունիքի մարզպետարանի հետ հետագա համագործակցության առաջնահերթությունները քննարկելը:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի պատասխանատուները ներկայացրին կազմակերպության կողմից Սյունիքում վերջերս իրականացված ծրագրերը՝ որոնք ակտիվ են եղել հատկապես սահմանամերձ որոշ գյուղերում: Իսկ Եվրոպական ներդրումային բանկը նոր է նախատեսում ծրագրերի մեկնարկը մարզում: Քանի որ այժմ Սյունիքին վերաբերող տարբեր ծրագրային փաթեթներ են կազմվում թե՛ այս 2 կառույցների, թե՛ ԵՄ կողմից, որոնք քննարկվում են նաև ՀՀ կառավարության հետ, հյուրերը նաև մարզային իշխանությունից էին ցանկանում լսել, թե որոնք են այստեղ առկա խնդիրների առաջնահերթություններն ու տեղում ծրագրային առաջարկներ ստանալ:

Ռոբերտ Ղուկասյանը ողջունեց ու կարելորեց պաշտոնյաների այցը Սյունիք եւ շնորհակալություն հայտնեց կատարված ու նախատեսվող աշխատանքների համար, նաև՝ համագործակցելու ու համատեղ աշխատելու պատրաստակամություն:

Մարզպետը ներկայացրեց այն առաջնային խնդիրները, որոնց լուծումը Սյունիքի բնակիչների համար հրատապ են, բայց նաև նշեց, որ մարզը զարգացման մեծ ներուժ ունի:

Ռ.Ղուկասյանը կարելորեց ծրագրեր մշակելիս մարզի համայնքներին ու բնակավայրերին ըստ առանձնահատկությունների տարբերակված մոտեցումը եւս:

«Միջազգային կառույցների ու այլ գործընկերների ակտիվությունն ու ներդրումների առակայությունը Սյունիքում լավ ցուցանիշ է մարզում՝ բնակիչների մեջ լավատեսություն ու



վաղվա օրվա, այստեղ մնալու համար վստահություն ներշնչելու համար», - ասաց մարզի ղեկավարը:

Կազմակերպություններն առաջիկայում Սյունիքում մի շարք ծրագրեր են նախատեսում՝ ուղղված կրթական, սոցիալական, առողջապահական, գյուղեր տանող ճանապարհների բարելավման, ենթակառուցվածքների զարգացման, ոչ ֆորմալ կրթության, համայնքների կարողությունների հզորացման, էներգախնայող համակարգերի ներդրման ու այլ ոլորտներին:

Նաեւ արդեն մեկնարկած ու սպասվող ծրագրեր կան՝ ուղղված այստեղ բնակվող՝ Արցախից տեղահանված անձանց կարիքներին ու ինտեգրմանը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/370332361802801>

**16.05.2022**

**ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը նախօրեին Սյունիքի մարզի Միսիան և Գորայք համայնքներում իրագեկման հանդիպումներ է իրականացրել**

Բնակիչներին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերով սահմանվող փոփոխությունները:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում նախատեսված փոփոխություններով Միսիան համայնքում ներառվելու են Միսիան, Դաստակերտ քաղաքները և Ախլաթյան, Աղիտու, Անգեղակոթ, Աշոտավան, Արևիս, Բալաք, Բնունիս, Բոնակոթ, Գետաթաղ, Գորայք, Դարբաս, Թանահատ, Թասիկ, Իշխանասար, Լծեն, Լոր, Ծղուկ, Հացավան, Մուցք, Նժդեհ, Նորավան, Շաղատ, Շամբ, Շաքի, Շենաթաղ, Որոտնավան, Սալվարդ, Սառնակունք, Սպանդարյան, Վաղատին, Տոլորս, Տորունիք, Յղունի, Ույծ գյուղերը:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/MinistryTerritorialAdministrationInfrastructureRA/posts/314007670916224>

**13.05.2022**

**ԹՂՄԿՏ ընկերությունում մեկնարկել են աշխատակիցների մասնագիտական գիտելիքների, ունակությունների, հմտությունների ստուգման և գնահատման աշխատանքները**

Ընկերության արտադրական գծով տնօրենի տեղակալ Արտակ Ղոնյանի խոսքով՝ «ԳեոՊրոՄայնինգ» ընկերախմբի որդեգրած սկզբունքներից է՝ մշտական գործող հանձնաժողովի միջոցով ստուգել աշխատակիցների մասնագիտական կարողությունները, ապահովել առաջընթաց:

Այն աշխատակիցները, ովքեր պրակտիկայից զատ ունեն նաև տեսական հիմնարար գիտելիքներ, կարող են մասնակցել քննություններին՝ տարակարգի և աշխատավարձի փոփոխման նպատակով:

Նախապես տրամադրվում են տեսական նյութերը, որոնց հիման վրա էլ կազմված են քննական տոմսերը: Առանցքային են նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահպանմանը վերաբերող հարցերը:

Օրերս հարստացուցիչ ֆաբրիկայի շուրջ 30 աշխատակից մասնակցեցին քննություններին՝ ապահովելով հիմնականում դրական արդյունքներ:

Արտադրամասի տեխնիկական կանոնակարգման կառավարչության I տարակարգի հսկիչ Հռիփսիմե Թումանյանը միակն էր մասնակիցներից, ով փայլուն մասնագիտական գիտելիքների շնորհիվ միանգամից ստացավ III տարակարգ:

Մեկ ուրիշ աշխատակից՝ ինքնամանրացման տեղամասի I տարակարգի հսկիչ Ռուզաննա Կարապետյանը, ստանալով II տարակարգ, հավելեց, որ ոգևորիչ են նման հնարավորությունները, նաև՝ պարտավորեցնող...

Գործընթացն ընկերությունում շարունակական բնույթ կկրի:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/zmcofficial/posts/1401213960352062>

**12.05.2022**

### **Որ ամրապնդվեն տնտեսական կապերը**

«Տարածաշրջանների միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացումը Եվրասիական տնտեսական միությունում» թեմայով սեմինարը մայիսի 12-ին մեկնարկեց Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Մեծ հայրենականում ընկած կապանցի զինվորների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով:

Այնուհետև տարածաշրջանային սեմինարի մասնակիցները Կապանի մշակույթի կենտրոնի նախասրահում ծանոթացան Սյունիքի կազմակերպությունների և անհատ ձեռներեցների արտադրանքն ու գեղանկարիչների ստեղծագործությունները ներկայացնող ցուցահանդեսին: Ծանոթանալուց հետո բարձրացան երկրորդ հարկ, որտեղ բացման խոսքով սեմինարի մասնակիցներին ողջունեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը: Համայնքի ղեկավարը համոզմունք հայտնեց, որ սեմինարն ազդակ կհանդիսանա քննարկվող նախաձեռնությունների իրականացման համար, աշխատանքային հարթակ կդառնա ձեռներեցների և գործարարների համար՝ առաջավոր տեխնոլոգիաները և բարձր չափանիշներն արտադրության մեջ ներդնելու ճանապարհին, ինչպես նաև ուղի կհարթի տնտեսական ու մտավոր ներուժը լիարժեքորեն օգտագործելու նպատակով:

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը ողջույնի խոսքում այն միտքը շեշտեց, որ տարածաշրջանային սեմինարը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ծանոթանալու գործընկեր երկրների փորձին, այլև Կապան ժամանած հյուրերին: Նաև հույս հայտնեց, որ սեմինարն օգտակար կլինի ոչ միայն փորձի փոխանակման առումով, այլև հյուրերին հնարավորություն կտա հաղորդակցվելու Սյունիքի տնտեսական ներուժի հետ: Մարզպետը կարևորեց հանգամանքը, որ սեմինարի երրորդ օրը քննարկելու են բնապահպանական հիմնահարցեր, և սեմինարի օրակարգում ներառված են «կանաչ» տնտեսության զարգացմանը միտված հեռանկարները:

ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանն իր խոսքում ընդգծեց, որ Կապանը միջազգային առևտրի առումով ռազմավարական նշանակություն ունի և այն տարածաշրջանն է, որ կարող է հրապուրել Հայաստանի գործընկերներին:

Երկրորդ գործոնն այն է, ասաց բանախոսը, որ սեմինարի մասնակիցներն ավելի մանրամասն կծանոթանան ԵԱՏՄ հարավային գործընկերոջը, մանավանդ Կապանին, որտեղ նախկինում գործում էին մեկ տասնյակից ավելի միութենական ենթակայության արդյունաբերական ձեռնարկություններ, ինչը բարերար հետք է թողել քաղաքային միջավայրի, քաղաքային մշակույթի և երիտասարդության վրա:

- Մտածում ենք վերականգնել նախկին կորպորատիվ կապերը՝ դրանք հազեցնելով նոր բովանդակությամբ, - ասաց փոխնախարարը:

Վ. Տերտերյանը հույս հայտնեց, որ հաջորդ նման սեմինարն ավելի ներկայացուցչական կլինի՝ միջպետական կապերն ավելի սերտ դարձնելու համար:

«Մյունխաց երկիրը» սեմինարի առաջին նիստի ավարտից հետո խնդրեց ԵԱՏՄ ռազմավարական տնտեսական քաղաքականության բաժնի պետ, մակրոտնտեսության մասնագետ Անդրեյ Պանտելենին՝ համառոտ տալ իր զեկուցման էությունը: Ի պատասխան նա ասաց՝ «Ես փորձել եմ ներկայացնել այն հնարավորությունները, որ ընձեռում է ԵԱՏՄ-ն տարածաշրջաններին, այդ թվում՝ Հայաստանին: Ուզում եմ բոլորին տեղեկացնել, որ Հայաստանի գործարարները կարող են ազատորեն առևտուր անել ԵԱՏՄ բոլոր երկրներում, ավելի ստույգ՝ Ձեզ հարկ չի լինի վճարել լրացուցիչ հարկեր, Ձեզ համար այնպիսի պայմաններ են ստեղծված, ինչպես ռուսաստանցիների համար:

Եթե դու բժիշկ ես, համեցեք, կարող ես քո մասնագիտական ունակությունները դրսևորել, եթե ուզում ես վարսահարդարման սրահ բացել, խնդրեմ, Ռուսաստանում, Բելառուսում՝ ոչ մի խնդիր չկա:

Եթե դու որևէ փաստաթուղթ ես ձեռք բերել Հայաստանում, դա ընդունելի է միության բոլոր երկրներում»:

Սեմինարն աշխատանքները կշարունակի մայիսի 13-ին, որը բնապահպանական թերում կունենա:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/or-amrapndven-tntesakan-kapery>

**11.05.2022**

### **Կապանում այսօր մեկնարկել է տարածաշրջանային սեմինար, որ կտևի երեք օր**

Կապանում մայիսի 11-ին մեկնարկել է «Միջտարածաշրջանային առևտրատնտեսական համագործակցության զարգացումը Եվրասիական տնտեսական միության մեջ» տարածաշրջանային սեմինարը, որ կտևի երեք օր: Այն կանցկացվի Կապանի մշակույթի կենտրոնի նախասրահում, որտեղ կազմակերպվել է մարզկենտրոնի գեղանկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես:

Սեմինարի երկրորդ օրը կսկսվի Բաղաբուրջի հուշահամալիրում Մեծ եղեռնի զոհերի և Հայրենական մեծ պատերազմում (1941-1945) զոհվածների հուշակոթողներին ծաղկադրումով:

Մեմինարի բացմանը հյուրերին կողջունեն Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը, այնուհետև կինչեն թեմատիկ զեկուցումներ՝ նվիրված ԵԱՏՄ երկրների առևտրատնտեսական համագործակցության զարգացման հիմնահարցերին:

Այնուհետև մշակույթի կենտրոնում կանցկացվի ««Կանաչ» հեղաշրջում. տարածաշրջանների հնարավորությունները և հեռանկարները» թեմայով քննարկում, և զեկուցումները նվիրված կլինեն, մասնավորապես, ԵԱՏՄ երկրներում «կանաչ» տնտեսության սկզբունքների ներդրմանը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/kapanum-aysor-meknarkel-e-taratsashrjanayin-seminar-or-ktevi-ereq-or>

**08.05.2022**

### **Շուռնուխն ամբողջովին լուսավորվել է, նաև 4 ընտանիք բնակարանամուտ է տոնելու**

Շուռնուխում 4 ընտանիք բնակարանամուտ է տոնելու: Ավարտին են մոտենում համայնքի միջոցներով վերակառուցվող բազմաբնակարան շենքի ներքին հարդարման աշխատանքները, լուծվել է նաև բնակավայրի լուսավորության ամբողջ ցանցի արդիականացման խնդիրը:

Շուռնուխ համայնքի միջոցներով վերակառուցվում է բազմաբնակարան շենք: Աշխատանքների ավարտին 4 ընտանիք բնակարանամուտ է տոնելու: Առաջիկայում պլանավորվում է շենքի տարածքում նաև մանկական կենտրոն ունենալ, որտեղ երեխաների ժամանցը կազմակերպելուն զուգահեռ նաև 2 նոր աշխատատեղ կհիմնվի:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ բնակավայրն ամբողջովին լուսավորվել է, ամբողջ ցանցը արդիականացվել է, ԼԵԴ լուսատուներ են տեղադրվել: Շուռնուխում գիշերային լուսավորության խնդիրն ամբողջովին լուծվել է:

Շուռնուխում նաև այգիների հիմնման ծրագիր է իրականացվում «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի հետ համատեղ: Տնտեսություններին բաժանավել են պտղատու ծառեր՝ այգիներ հիմնելու նպատակով:

Աղբյուրը՝ <https://hy.armradio.am/2022/05/08/%D5%B7%D5%B8%D6%82%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%AD%D5%B6-%D5%A1%D5%B4%D5%A2%D5%B8%D5%B2%D5%BB%D5%B8%D5%BE%D5%AB%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%B6/>

Կազմեց Ս. Ալավերդյանը